

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2001թ. հունվար-մայիսին կազմել են 237944.4 մլն.դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել են 12.0 %-ով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 246916.8 մլն.դրամ և ավելացել 13.3 %-ով:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2001թ. հունվար-մայիսին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 206818.4 մլն.դրամ (86.9%), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 11019.3 մլն.դրամ (4.7 %), ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճը կազմել է 10727.4 մլն.դրամ (4.5 %):

Դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքում 2001թ. հունվար-մայիսին 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սպառողական ծախսերի տեսակարար կշիռն աճել է 0.9 տոկոսային կետով, իսկ ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների՝ 0.8 տոկոսային կետով:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները, հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2001թ. հունվար-մայիսին 2000թ. հունվար-մայիսի նկատմամբ աճել են 8.7%-ով:

Աշխատանքի վարձատրություն: 2001թ. հունվար-մայիսին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 22196 դրամ և 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 12.1%: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա կազմել է 13982 դրամ և 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 8.3 %, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը համապատասխանաբար 28998 դրամ և 15.3 %:

2001թ. ապրիլին անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		% -ներով ընդամենի նկատմամբ		% -ներով նախորդ տարվա նկատմամբ	
	ապրիլ	հունվար-ապրիլ	ապրիլ	հունվար-ապրիլ	ապրիլ	հունվար-ապրիլ
Ընդամենը	22339	21988	100	100	112.8	112.4
Արդյունաբերություն	33245	32412	148.8	147.4	116.0	117.8
Գյուղատնտեսություն	18592	17685	83.2	80.4	93.6	105.8
Անտառտնտեսություն	11307	11452	50.6	52.1	102.8	112.7
Տրանսպորտ	38583	34569	172.7	157.2	120.1	102.9
Կապ	45523	43060	203.8	195.8	117.6	107.4
Շինարարություն	37157	38403	166.3	174.7	114.2	111.1
Առևտուր, հանրային սնունդ	9087	9702	40.7	44.1	125.6	133.5

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		% -ներով ընդամենի նկատմամբ		% -ներով նախորդ տարվա նկատմամբ	
	ապրիլ	հունվար-ապրիլ	ապրիլ	հունվար-ապրիլ	ապրիլ	հունվար-ապրիլ
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղ-սպասարկում	26122	25776	116.9	117.2	111.1	116.8
Հաշվողական տեղեկատվական սպասարկում	18853	19109	84.4	86.9	110.2	113.8
Առողջապահություն, ֆիզ-կուլտուրա և սոցիալական ապահովություն	12684	13217	56.8	60.1	104.9	106.0
Կրթություն	12997	12750	58.2	58.0	119.7	121.4
Մշակույթ	9619	9834	43.1	44.7	100.8	102.8
Արվեստ	11520	11105	51.6	50.5	112.6	107.8
Գիտություն և գիտական սպասարկում	17587	17886	78.7	81.3	113.9	115.7
Վարկավորում և ապահովագրություն	72864	71379	326.2	324.6	103.5	113.9
Կառավարման ապարատ	33584	32777	150.3	149.1	108.8	108.5
Այլ	24337	24150	108.9	109.8	106.8	106.4

2001թ. ապրիլին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 43.1 (մշակույթ) - 58.2 (կրթություն) %-ի սահմաններում: Անվանական միջին աշխատավարձը զգալիորեն բարձր է հատկապես վարկավորման համակարգում՝ ընդհանուր միջինը գերազանցել է 3.3 անգամ, կապի համակարգում՝ 2.0, տրանսպորտում և շինարարության մեջ՝ 1.7 արդյունաբերության մեջ և կառավարման համակարգում՝ 1.5, բնակարանային-կոմունալ տնտեսության և կենցաղսպասարկման ոլորտում՝ 1.2 և այլ ճյուղերում՝ 1.1 անգամ: